Հայրենիք Եկեղեցի Արժանապատվություն
Սանկտ Պետերբուրգի Հայ համայնքի պարբերաթերթ
№1 (259), 2015 թ. Լույս է տեսնում 1993 թ. փետրվարից

Отечество Церковь Достоинство
Газета Армянской общины Санкт-Петербурга
№ 1 (259), 2015 г. Издается с февраля 1993 г.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 6 Յունուարի, 2015 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Որ ի հրեղէն աթոռ ընդ Հօր ես բնակեալ
եւ ի հրեշտակաց սպասաւորեալ, այսօր կամով Հօր
ի յերկրի երեւեցար մարմնով կուսական ծննդեամբ,
զՔեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք»
(Շարական Ս. Ծննդեան):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,
Շարականագրի աղօթամատոյց այս օրհներգով բերում ենք ձեզ մեր Տիրոջ և Փրկչի Սուրբ Ծննդեան և Աստուածայայտնութեան սքանչելի աւետիսը:
Երկնային բարձունքներում Ամենակալ Հորն աթոռակից և հրեշտակներից սպասաւորեալ Աստուծոյ Որդին մարմնացաւ և աշխարհ եկաւ, որպէսզի ընդունենք փրկութեան յոյսն ու շնորհը և միշտ նորոգուող կեանքը, որ Փրկիչ մեր Տէրն է պարգևում: Բեթղեհեմում ծնուած Մանուկը նոր սիրտ ու հոգի է բերում աշխարհին՝ ճանաչելու Աստուծոյ սէրը մարդկանց հանդէպ և այն դարձնելու արդարութիւն, խաղաղութիւն ու սէր միմեանց հանդէպ: Բերում է զօրութիւնը՝ փարատելու անյուսութեան խաւարները և երկրի վրա հաստատելու սիրով լի այն կեանքը, որն ունի յաւիտենական կեանքի աւետիսը:
Սուրբ Ծննդեան աւետարանական պատումը մարդկութեան կեանքում Աստուծոյ ներկայութեան մեծ խորհուրդն է պատկերում: Բեղթեհեմի քարայրը նախատիպն է Սուրբ Եկեղեցու, հասարակ հովիւները և իմաստուն մոգերը աստուածպաշտութեան համար մէկտեղուած հաւատացեալներն են, իսկ մատուցուած ընծաները՝ առ Աստուած հաւատքով ապրուած բարի ու երկնահաճոյ կեանքն ու գործերը: Բեթղեհեմեան երկնակամարում Տիրոջ փառքի ծագումը, և լուսափայլ հրեշտակների հնչեցրած պատգամը երկնային հրաւէրն է աշխարհին՝ խաղաղութեան ու մարդկանց մէջ սիրոյ և հաճութեան, որոնց այսօր էլ փափագում է նեղութիւններով ու մարտահրաւէրներով բեռնաւորուած աստուածաստեղծ օրրանը մարդկութեան:
Նիւթատեխնիկական մեծ ձեռքբերումներ արձանագրած, գիտական բարձունքներ նուաճած ներկայ աշխարհում չեն դադարում կեանքի խաղաղութիւնն ու բարօրութիւնը խաթարող տագնապներն ու ցնցումները: Քաղաքական հակամարտութիւնները, ռազմական բախումները, խորացող ֆինանսական, տնտեսական ճգնաժամերը բերում են աւեր, վիշտ ու տառապանք, կարիքի և անապահովութեան նոր խնդիրներ: Մարդկային ըմբռնումներում խեղաթիւրուում են աստուածադիր հիմնարար սկզբունքները՝ մարդը չի ընկալուում որպէս Աստուծոյ պատկերով և նմանութեամբ ստեղծուած, կեանքը՝ որպէս երկնաշնորհ գերագոյն պարգև և մերձաւորի հանդէպ սէրը՝ որպէս աստուածնմանութիւն: Այս իրավիճակները և մտածողութեան այսպիսի աղաւաղումները հեռացնում են մարդուն հոգևորից, առաջնորդելով աստուածամերժ ընթացքների՝ մարդու և ազգերի իրաւունքների ոտնահարման, ընտանիքի գաղափարի, բարոյական արժէքների աղճատման:
Հակառակ Աստուածային կամքին մարդու հակոտնեայ ընթացքների՝ մարդեղութեան մեծ խորհրդով Տէրը ցոյց տուեց, որ Իր անսահման սիրոյ ու խնամքի մէջ է աստուածաստեղծ մարդը, և երկրային գոյութիւնը բաժանուած չէ յաւիտենութիւնից, իսկ մարդկութեան պատմութիւնը՝ Աստուծոյ ներկայութիւնից: «Ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 20),-ասում է Փրկիչ մեր Տէրը: Մարդկային կեանքում Փրկչի մշտական ներկայութիւնը նոր իմաստ է պարգևում, բարձր ու վեհ բովանդակութիւն հաղորդում մարդու և աշխարհի ընկալմանը՝ բերելով մարդկանց Աստուծոյ ժողովուրդ լինելու գիտակցութիւնն ու պատասխանատուութիւնը և հրաւէրը՝ մնալու և յարատևելու «սիրեցէք միմեանց» Տիրոջ

նոր պատուիրանի մէջ (Յովհ. ԺԳ 34): Մերձաւորի հանդէպ սէրը վեհացնում և արժևորում է մարդուն և նրա գործերը, պահում աստուածնմանութեան շնորհի մէջ և հաւրութեան կեանքը հաստատում բարու մէջ: Միմեանց հանդէպ սիրով առաջնորդուող հասարակութիւնը կարող է բխեցնել կեանքը ոռոգող հոգևոր ներուժի անսպառ աղբիւրներ, լինել ճշմարտապէս արդարամիտ և իրաւադատ, կարեկից ու ողորմած: Տէրունապատուէր այս ուղիով մարդկութիւնը կարող է ձերբազատուել աղետաբեր իրավիճակներից և հոգսերից, դիմակայել նեղութիւններին, արդարութեամբ հարթել հակառակութիւնները և համերաշխ գոյակցութեամբ կերտել նոր օրը մարդկութեան կեանքի:
Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Սուրբ Ծննդեան օրհներգին ու փառաբանութեանը այսօր միախառնուում են մեր սրտաբուխ աղօթքները յանուն Հայոց Ցեղասպանութեան մեր անմեղ նահատակների, ովքեր չուրացան Փրկչին, իրենց ինքնութիւնն ու սուրբ հաւատքը: Եղեռնի դառնաղետ տարիների ամենադաժան փորձութեանց մէջ անգամ չլռեց Փրկչին ուղղուած՝ մեր ժողովրդի հոգու օրհներգը: Մեր Տիրոջ հետ գտանք ոգին և ուժը վերածննդի, պետականութիւն կերտեցինք, ազգային մեր կեանքը բարձրացրեցինք, մեր իրաւունքների համար պայքարեցինք հաւատով, որ արդարութեան և ճշմարտութեան ուղիները պիտի կերտեն բռնութիւնից զերծ, մարդասէր ու խաղաղ աշխարհ:
Հայոց Ցեղասպանութեան ոճրից 100 տարի անց նոյն հաւատով ու վստահութեամբ շարունակում ենք մեր պայքարը՝ յանուն մեր արդար դատի, մեր խաղաղ կեանքի՝ չդադարող շրջափակման և պատերազմի վերսկսման պայմաններում: Այսօր մեր կեանքում առկայ բազմաթիւ հրամայականների ու խնդիրների առջև, սիրելիներ, առաւել ջանք ու նուիրում ներդնենք, յանձն առնենք հայրենաշէն ու ազգաշէն ծրագրեր ու գործեր՝ ի սէր մեր ժողովրդի բարօրութեան, մեր երկրի հզօրութեան, մեր իղձերի իրականացման: Մեր կեանքը ապրենք հայրենեաց աւանդներով, հաւատարիմ քրիստոնէական մեր արժէքներին, նիւթապաշտութեանը դիմակայելով աստուածպաշտութեամբ, շահամոլութեան դէմ դնելով Տիրոջ կողմից գովաբանուած ողորմութիւնը (Մատթ. Ե 7), ուժի և ստիպողականութեան փոխարէն՝ քրիստոսապատուէր սէրը (Յովհ. ԺԳ 34-35), եսասիրութեան և շահագործման փոխարէն՝ բարի սամարացու նման կարիքաւորին օգնելը (Ղուկ. Ժ 30-37), եղբայրատեացութեան փոխարէն՝ առաքեալի յորդորած եղբայրսիրութիւնը (Հռոմ. ԺԲ 10) և մեր մեծերի օրինակով՝ «ես»-ի փոխարէն՝ «ազգ»-ը: Բարգաւաճենք և զօրանանք ընտանիքներում նոր զաւակների ծնունդով, ազգանուիրումի, հայրենասիրութեան նոր վկայութիւններով՝ մեր ազատ երկրից, Սփիւռքի եզերքներից, վերականգնուած և նորակառոյց մեր եկեղեցիներից, հանուր հայ կեանքից երկինք բարձրացնելով մեր հայրերի օրհներգը. «զՔեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք»:
Սուրբ Ծննդեան խնդագին աւետիսով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին և մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգևոր դասին՝ մաղթելով Տիրոջ զօրակցութիւնն իրենց առաքելութեանը՝ ի զօրացում մեր ժողովրդի հոգևոր կեանքի և ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու:
Ողջունում ենք Քոյր Եկեղեցիների հոգևոր Պետերին՝ Փրկչի ամենաառատ շնորհները հայցելով իրենց և իրենց հաւատաւոր հօտին:
Հայրապետական օրհնութեամբ Մեր բարեմաղթանքներն ու ողջոյնն ենք բերում Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ տիար Սերժ Սարգսեանին և Առաջին տիկնոջը, ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Բակո Սահակեանին, հայոց պետական աւագանուն՝ աղօթքով, որ Տիրոջ օրհնութեամբ արգասաւորուեն մեր երկրի և ժողովրդի խաղաղութեանն ու բարօրութեանը և մեր ժողովրդի իրաւունքների պաշտպանութեանն ուղղուած նրանց ջանքերը:
Մեր ողջոյնն ու բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին՝ մաղթելով արգասաբեր գործունէութիւն՝ ի նպաստ մեր ժողովուրդների բարեկամութեան ու համագործակցութեան և տարածաշրջանում կայունութեան ու խաղաղութեան ամրապնդման:
Սուրբ Ծննդեան ողջունաբեր աւետիսով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ մաղթանքով, որ ջերմ սիրով սրտում պահպանի Տիրոջն ուղղուած օրհներգը և մնայ Բարձրեալի ամենախնամ Աջի հովանու ներքոյ, հաւատարիմ՝ վերազարթօնքի իր տեսիլքներին և լաւատես, որ երկնային արդարութեան լոյսով պիտի բացուի իր հանդէպ արդարութիւնը վերականգնելու օրհնեալ օրը:
Աղօթք ենք բարձրացնում, որ Փրկիչ մեր Տիրոջ շնորհները սփռուեն մարդկանց սրտերում՝ խաղաղութիւն, համերաշխութիւն, ապահով առաջընթաց բերելով աշխարհին: Թող մարդացեալ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, ամեն ժամ օրհնի և առաջնորդի մեր կեանքը, խաղաղ, հաւատքով ամուր, սիրով ու միասնական պահպանի մեր ժողովրդին՝ այսօր և միշտ փառաբանելու Իր Սուրբ Անունը՝ Հոր և Սուրբ Հոգու հետ. ամէն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
ձեզ եւ մեզ մեծ աւետիս

Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բոլոր եկեղեցիներում Ս. Պատարագի ընթացքում հրապարակվեց Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ կոնդակը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ
ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ
ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ
ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ,
ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ,
ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ
ՍԱՐԿԱՒԱԳԱՑ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ
ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԼԻ ՀԱՄԱՅՆ
ՀԱՒԱՏԱՑԵԼԻ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի առջեւ ենք՝ մեր հոգիներում արդարութեան եւ ճշմարտութեան անլռելի, զօրեղ պահանջով:

2015 թուականի իւրաքանչիւր օր մեր ժողովրդի համար ոգեկոչման եւ խնկարկման օր է, հոգեւոր երթ դէպի Հայրենիքում եւ Սփիւռքում վեր յառնած նահատակաց յուշարձաններ՝ ծնրադիր խոնարհումով աղօթք բարձրացնելու անշիրիմ մնացած մեր անմեղ զոհերի հոգիների համար, ովքեր մահն ընդունեցին՝ մերժելով հաւատուրացութիւն եւ ազգուրացութիւն: Յիրաւի, «Արդարների ճանապարհները նման են ծագող լոյսի, որն առաջնորդում եւ լուսաւորում է նրանց, մինչեւ որ օրը լրիւ լուսաւորի»:

1915 թուականին եւ հետագայ տարիներին օսմանեան Թուրքիայի կողմից իրագործուեց Ցեղասպանութիւն մեր ժողովրդի նկատմամբ: Արեւմտեան Հայաստանում՝ բնօրրան մեր Հայրենիքում եւ Թուրքիայի հայաշատ բնակավայրերում կազմակերպուած ջարդերին, սովին ու հիւանդութիւններին, որ իշխում էին բռնագաղթի ճանապարհներին, զոհ գնացին ազգիս մէկ եւ կէս միլիոն զաւակներ: Թալանուեց դարերով ստեղծուածը, արդար վաստակը մեր ժողովրդի: Խոնարհուեցին ու աւերուեցին հազարաւոր մեր վանքերն ու եկեղեցիները, ազգային հաստատութիւնները, դպրոցները, ոչնչացուեցին եւ կորստեան մատնուեցին մեր հոգեւոր ու մշակութային արժէքները: Հայաթափուեց Արեւմտեան Հայաստանը, որտեղ մեր ժողովուրդը հազարամեակներ՝ Նոյեան դարից ի վեր, ապրել, արարել եւ իր պատմութիւնն ու մշակոյթն է կերտել:

Մէկ դար առաջ, երբ հայրենազրկուած հայութեան բեկորները սփռուում էին ողջ աշխարհով, երբ Արեւելեան Հայաստանը կենաց եւ մահու գոյամարտ էր մղում թուրքական զաւթիչների դէմ, դժուար էր հաւատալ հայ ժողովրդի ապագային: Բայց այն ճառագեց: Մեր ժողովուրդը Տիրոջ շնորհով յառնեց մահուանից: Հայրենիքի փրկուած հողակտորի վրայ վերականգնեց պետականութիւնը, աւերակներից ու խլեակներից վերակերտեց հայրենի երկիրը, դարձրեց գիտութեան, կրթութեան, մշակոյթի, «լոյսի եւ յոյսի Հայրենիք»: Տարագիր հայութիւնը տարբեր երկրներում իր տունը կառուցեց, հայրենի ծուխը ծխեցրեց, ապրեցրեց ու բարձրացրեց իր հոգեւոր ու ազգային կեանքը: Որտեղ էլ ապրեցին մեր ժողովրդի զաւակները, հասան յաջողութիւնների, արժանացան յարգանքի, վստահութեան, ճանաչուեցին բարեխիղճ աշխատանքով, գիտութեանը, արուեստին, հասարակութեան բարօրութեանը բերած աւանդով: Այսպիսին է վերջին հարիւրամեակի պատմութիւնը մեր ժողովրդի՝ պատմութիւն մաքառումի եւ վերածննդի: Այսօր, հակառակ բոլոր դժուարութիւնների՝ մեր ժողովուրդը ամրապնդում է իր անկախ պետականութիւնը, կերտում իր ազատ նոր կեանքը եւ ազգային վերազարթօնքի յոյսերով, լաւատեսութեամբ ու վստահութեամբ նայում գալիքին:

Փառք Քեզ, բիւր փառք Քեզ, Տէր, «Քո սպառազինութեամբ պաշտպանեցիր մեզ» (Սաղ. Ե 13): Քո յոյսով, Տէր, մեր ժողովուրդը պայծառացաւ ու զօրացաւ: Քո յոյսով փայլեց մեր հոգու հանճարը, Քո զօրութեամբ ծնունդ առան մեր յաղթանակները: Ստեղծեցինք, երբ մեր ստեղծածը աւերեցին, ապրեցինք, երբ ուզեցին կորստեան մատնել մեզ: Դու, Տէր Աստուած մեր, կամեցար, որ ապրի ու բարձրանայ եղեռնագործ ծրագրով մահուան դատապարտուած մեր ժողովուրդը եւ մարդկութեան խղճի եւ միջազգային իրաւունքի առջեւ բարձրացնի ու պաշտպանի իր արդար դատը՝ ընդդէմ պիղատոսեան անտարբերութեան եւ Թուրքիոյ ոճրագործ ժխտողականութեան:

Արդարութեան համար՝ մինչեւ մեր դատի յաղթանակ, միասնաբար՝ Եկեղեցի, Ազգ եւ Պետութիւն, աննահանջ պիտի շարունակենք մեր պայքարը: Արդարութիւն է պահանջում մեր անմեղ զոհերի արիւնը, մեր ժողովրդի կրած տառապանքը, արդարութիւն են պահանջում մեր աւերակուած սրբութիւնները, մեր ժողովրդի ոտնահարուած իրաւունքները, նաեւ՝ կեղծուող եւ խեղաթիւրուող պատմութիւնը մեր ժողովրդի: Ցեղասպանութիւն վերապրած մեր ժողովուրդը հաւատացել եւ հաւատում է, որ տասնեակ երկրների, պետական, հասարակական կազմակերպութիւնների ու անհատների կողքին, ովքեր ճանաչել են Հայոց Ցեղասպանութիւնը, պիտի կանգնեն նորերը, համոզումով, որ արդարութեան հաստատումը պայմանն ու երաշխիքն է թշնամանքից եւ բռնութիւնից զերծ խաղաղ աշխարհի:

Մէկ եւ կէս միլիոն մեր նահատակների յիշատակի առջեւ Մենք երախտագիտութեան Մեր խօսքն ենք վերստին ուղղում այն պետութիւններին, կազմակերպութիւններին եւ անձանց, ովքեր ճանաչել եւ դատապարտել են Հայոց Ցեղասպանութիւնը: Երախտագիտութիւն ենք յայտնում մեր ժողովրդի զաւակներին եղբայրաբար ընդունած երկրներին ու նրանց բարեսէր ժողովուրդներին: Մարդկութեան պատմութեան լուսաւոր էջեր են արդարութեան եւ մարդասիրութեան այսօրինակ դրսեւորումները, որ սերունդներից միշտ պիտի յիշուեն եւ միշտ գնահատուեն ու նպաստեն աշխարհի խաղաղ, անվտանգ, համերաշխ կեանքին:

Հայոց Հայրապետիս համար հոգեւոր մխիթարութիւն է ի լուր մեր ժողովրդեան ծանուցել, որ 2015 թ. ապրիլի 23-ին մեր Սուրբ Եկեղեցին՝ յընթացս սրբազան պատարագի, յատուկ արարողակարգով սրբերի շարքում է դասելու «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նահատակութեան պսակն ընդունած իր զաւակներին՝ Ցեղասպանութեան նահատակ սրբերի յիշատակի օր հռչակելով ապրիլի 24-ը:

Ընդորիընկալ ժողովուրդ հայոց, ազգ նահատակ, ազգ յարուցեալ. խրոխտ ապրիր, վստահ քայլիր, հայեացքդ տապանակիր Արարատին՝ աներկմիտ սրտով մեծ պահիր յոյսդ: Քեզ է ուղղուած մեր Տիրոջ խրախոյսն ու պատգամը. «Թէեւ քիչ զօրութիւն ունես, բայց պահեցիր իմ խօսքերը եւ չուրացար իմ անունը: Եպահիր ինչ որ ունես, որպէսզի ոչ ոք չառնի քո պսակը» (Յայտն. Գ 8-11): Արդ, պահպանենք մեր ընթացքը Աստուծոյ առաջ արդար ու ճշմարիտ, հաւատքի հաստատուն ուղիներում, որ ծագող այգաբացի պէս ցրում է խաւարը եւ պարզում յոյսի հորիզոնները: Աստուծոյ հետ է մեր ճանապարհը, եւ հաւատքի կեանքը՝ մեր յաղթութիւնը: 100-րդ տարելիցը արդիւնաւորենք մեր ժողովրդի մէկդարեայ մաքառումի եւ վերածննդի ուղին արժեւորելով, որպէսզի մեր զաւակները ճանաչելով իրենց պապերի եւ հայրերի ապրելու եւ ստեղծելու հերոսական կամքը, յանուն ազգի եւ Հայրենիքի ստանձնած յանձնառութիւնները՝ կերտեն նոր պայծառ օրը հայրենի մեր երկրի ու աշխարհասփիւռ ժողովրդի: Մեր նահատակների յիշատակի ոգեկոչումը դարձնենք ուժ եւ զօրութիւն հոգեւոր, ազգային, հայրենական մեր կեանքին եւ Աստուծոյ ու մարդկանց առաջ արդար ընթացքով լուսաւորենք մեր ճանապարհը դէպի մեր իրաւունքների, մեր նուիրական իղձերի իրականացման հանգրուան:

Քրիստոսակառոյց նուիրական հոգեւոր կենտրոնում ազգիս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղօթում ենք առ Աստուած՝ հայցելով խաղաղութիւն, ապահովութիւն եւ բարօրութիւն մեր Հայրենիքին, սիրեցեալ մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի եւ անմայրամուտ լոյս ու հանգստութիւն՝ Ցեղասպանութեան մեր անմեղ նահատակների հոգիներին: Թող մարդկութեան կեանքում թագաւորեն սէրն ու եղբայրութիւնը, արդարութիւնն ու ճշմարտութիւնը, եւ արդարների ճանապարհները որպէս լոյս ծագեն, առաջնորդեն ու լուսաւորեն, մինչեւ լուսաւորուի նոր օրը խաղաղ ու երջանիկ աշխարհի:

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ (29 հունվարի, 2015 թ.)

2015 թվականը Հայոց Ցեղասպանության զոհերի սրբադասման լուսավոր խորհրդով բացվեց մեր կյանքում: Ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով, ինչպես արդեն հայտնի է, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ապրիլի 23-ին հանդիսավոր արարողությամբ սրբոց կարգն է դասելու հանուն հավատքի և Հայրենիքի իրենց կյանքը զոհաբերած մեր նահատակներին: Սրբացյալ մեր նահատակների բարեխոսությունը նորոգելու է կյանքը մեր ժողովրդի, նրանց հոգևոր սխրանքի ոգեկոչումը քաջալերելու է մեր ժողովրդի զավակներին ապրելու աստվածասեր ու հայրենասեր ոգով և զորացնելու՝ մեր իրավունքների պաշտպանության, Հայրենի մեր երկրի հզորացման, ազգիս լուսավոր ապագայի կերտման կամքն ու վճռականությունը:

Ցեղասպանության 100-ամյակը մեր արդար դատի պաշտպանության գործում ունեցած ձեռքբերումներով հանդերձ՝ նոր հանգրվան է պահանջատիրության և հաստուցման արդար մեր պայքարի ճանապարհին: Մեր ժողովուրդը, որն այսօր դիմակայում է բազում խնդիրների ու դժվարությունների, Հայրենիքի շրջափակման, պատերազմի սպառնալիքի, նաև միջազգային հարթակներում Թուրքիո կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումը ձախողեցնելու փորձերի, վճռականորեն շարունակելու է արդարության իր պայքարը: Հայոց Ցեղասպանությունից 100 տարիներ անց մեր նահատակների արյան, մեր կորուսյալ Հայրենիքի, մեր սրբավայրերի, մեր ոչնչացված մշակութային բազում արժեքների հանդեպ արդարությունը դեռևս չի վերականգնված՝ չնայած Հայոց Ցեղասպանությունը ճանաչվել ու դատապարտվել է շատ պետությունների ու հեղինակավոր կազմակերպությունների կողմից, որոնց երախտապարտ է մեր ժողովուրդը: Համայն ազգիս արդար սպասումն է, որ Թուրքիան ևս միանա Ցեղասպանությունը ճանաչած երկրներին՝ առերեսվելով սեփական պատմության հետ: Թուրքիո պետությանը պատասխանատվության կանչելու և հայոց դատի պահանջատիրության մեջ մեր ժողովրդի մղիչ ուժը ոչ թե ատելությունն է ու թշնամանքը, այլ արդարությունը վերականգնված տեսնելու պահանջն ու ձգտումը: Թուրքիան առ այսօր տարբեր խարդավանքներով ու դավերով շարունակում է Հայոց Ցեղասպանության իր ժխտողական քաղաքականությունը: Նույն գործելաոճի հերթական դրսևորումն է Ցեղասպանության 100-ամյակի տարում Թուրքիայի իշխանությունների կողմից ապրիլի 24-ը Գալիպոլիի ճակամարտի 100-ամյակի օր հռչակելը, ինչն ակնհայտ է, նպատակ ունի շեղելու աշխարհի ուշադրությունը և նվազեցնելու Մեծ Եղեռնի մեկդարյա տարելիցի նշանակությունը: Հայրապետական Մեր հորդորն է աշխարհասփյուռ Մեր զավակներին՝ գործադրելու բոլոր ջանքերն ու միջոցները՝ հանրային, պետական ու միջազգային բոլոր հարթակներում ներկայացնելու Թուրքիայի ժխտողական քաղաքականությունից բխող նման քայլերի իրական բնույթը, ոգին ու նպատակը և հրատապ պահելու Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչման ու դատապարտման և արդարության իրագործման պահանջը: Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցը կոչ է արդարության վերականգնման, հորդոր է դատապատելու ներկա աշխարհում գործված բոլոր ցեղասպանությունները, մոլեգնող ահաբեկչությունները, և ի վերջո, խղճի ու մարդկայնության դեմ կատարվող ոճիրներն ու հանցագործությունները: Ցեղասպանության 100-ամյա տարելիցը նաև կոչ է աշխարհին՝ վերջ դնելու սեփական շահերի համար մարդկանց և ժողովուրդների կյանքի զոհաբերմանը, նրանց իրավունքների ոտնահարմանը: Աշխարհի և մարդկության ապահով ու բնականոն կյանքը խաթարող ոճրագործությունները որոշապես հետևանք են նաև Հայոց Ցեղասպանության համընդհանուր դատապարտման հապաղման:

Ողջունում ենք որդեգրումը հռչակագրի և Մեր գնահատանքը բերում խմբագրական կազմի անդամներին:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին համայն աշխարհասփյուռ հայության ներուժն ու միասնականությունը զորացնելով՝ շարունակելու է հայրենի պետության, ազգային կազմակերպությունների ու հաստատությունների հետ ջանքեր գործադրել հանուն մեր արդար դատի հաղթանակի, շարունակելու է ջանքերը միջազգային ու միջեկեղեցական ասպարեզներում՝ ի խնդիր Հայոց Ցեղասպանության ճանաչման և Ցեղասպանության հետևանքների վերացման:

Հայրապետիս աղոթքն է, որ Աստված խաղաղություն շնորհի ողջ աշխարհին, մարդկության կյանքում զորացնի համերաշխությունն ու սերը, որպեսզի բարի արգասիքներով արդյունավորվի ժողովուրդների համակեցությունը:

Թող Տերը հավատքով զորացյալ և միասնական պահի մեր ժողովրդին, խաղաղ երկնքի ներքո պահպանի մեր Հայրենիքը և զորակից լինի համայն հայությանը՝ հզոր դարձնելու մեր պետությունը և բարօրության ու առաջընթացի մեջ հաստատելու մեր ժողովրդի ընթացքը:

ВЕРА И ДИАЛОГ

История не знает ни одного периода, не освященного религией. Чем больше тайн прошлого открывает современная наука, тем больше мы убеждаемся, что все этапы исторического развития объединяет одно: все человеческие сообщества были, так или иначе, религиозны. Библия не собрание народных сказок, смесь разных суеверий, которые наука давно опровергла и в которые стыдно верить в технологически развитом 21-ом веке. Современный человек торопится, объявляя себя атеистом, а атеизм – отсутствием веры в божественную сущность. Атеисты, как и все остальные люди, верующие, ибо человек может выбрать, во что ему верить, но не может выбрать, верить или нет. Нет людей ни во что не верующих. Само неверие за последние несколько веков развития идей просвещения и гуманизма утверждается своими адептами как новая вера, современная и модная. Человеку важно знать, что быть атеистом не значит занимать нейтральную позицию, а означает ошибочное решение вычеркнуть Бога из своей жизни. Устроиться без Бога навсегда, пренебрегая божественным откровением. Чаще всего подобные попытки кончаются пустыми рассуждениями о Боге, блужданием в разных религиозных и философских идеях в тщетной надежде успокоится интеллектуально и нравственно. Наука не ведет к покою и у нее не научишься нравственности.

Религия – не отвлеченные рассуждения о божественных вещах, а вера в божественное начало мироздания и приятия этой великой тайны в свое существо. Человек вступает с Богом в персональные, личностные отношения, основанные на вере не только в единство и беспредельность Творца, но и в бесконечную милость Всевышнего в отношении своих созданий. Это непостижимо для тех, кто не дошел до веры, но нет ни одного, кто бы продвинулся дальше религиозных истин.

Какие бы прекрасные объяснения ни давала современная наука, без веры в единого и личностного Бога жизнь человека «представляется нелепым происшествием на окраине вселенной» (Б. Рассел). Наука – инструмент превосходный, но не всегда подходящий. Научные теории помогают нам понимать, как устроен мир, но только Библия объясняет, почему мы живем. Наука предоставляет много фактической информации, великолепно систематизирует весь наш опыт, но только религия вырабатывает этику и определяет, что хорошо, что плохо, что красиво, а что безобразно, что нравственно, а что безнравственно. Только религиозные и этические начала питают общественные и правовые нормы. Заниматься наукой ради науки все равно, что вытаскивать себя за волосы из болота. Справедливо сказал Эйнштейн: «Между наукой и религией не может быть конфликта. Наука без религии хромает, а религия без науки ничего не видит». Развивая эту мысль, можно утверждать, что в противном случае, в случае непримиримости сторон в долгосрочной перспективе и религия, и наука обречены на профанацию. Религия перестанет быть живой, превратится в мертвую традицию, окаменевшую форму, а культ «Божественного Разума» на вполне научных основаниях приведет к разрушительным последствиям. Вспомним, что уже во времена французской революции «Объективный разум» не остановил террор и гильотину, а нацизм так и вовсе полностью опирался на теорию эволюции. Да и сегодняшняя картина нашего мира свидетельствует о том, что, несмотря на выдающиеся технократические достижения, наша действительность скатывается к междоусобице и хаосу. Эйфория прогресса 19-го и первой половины 20-го веков улетучилась. Без религиозных оснований научный прогресс не будет прогрессом гуманным, а значит не приведет к миру и согласию. Библия сотни лет была под прицелом острия науки и выстояла. А фактов ее достоверности больше, чем у всех исторических и художественных произведений. И так Бог – не какая-то идея, а настоящая реальность. Бог не концепция, которую нужно принять, а личность, которую нужно встретить. Не только встретить, но довериться и доверять, что по сути и означает верить. Вера, в свою очередь, не означает сентиментально-эмоциональные переживания, щадный эгоизм, который в свою очередь ведет к саморазрушению человека, а вслед за ним и всего человеческого сообщества. Вот что ждет нас, если все в нашей жизни объяснять законами физики, химии и биологии. (А. Гитлер, кстати, был большим ценителем искусств и ревнителем науки, действовал строго научными методами.) Важно отметить и следующее. Поверить и принять Бога – это не все дело, это даже не полдела, это все лишь первый шаг в верном направлении. А дальше – бесконечность диалога со своим Создателем, творческие отношения в любви и в свободе, трудная дорога без конца и края, но ведущая в жизнь вечную.

а подразумевает участие всего разума, всего сердца, всей воли, всей полноты человеческого существа. Вера есть наш ответ на Божий призыв принять Его любовь и посвятить ей свою жизнь. Но Бог не только дарит нам свою любовь, но одновременно является источником моральных обязательств. Почему нельзя обойти эти вопросы? Почему нельзя уйти от них? Ведь у каждого из нас своя жизнь, наполненная приобретениями и утратами, задачами и стремлениями, правами и обязанностями. От успешной реализации всего этого многообразия зависит наша собственная судьба, судьба родных и близких, судьба отечества, наконец. Почему мы должны постоянно возвращаться к вековечным вопросам нашего бытия? Потому что нельзя жить полнокровной жизнью и быть полноценным человеком, не ответив в своем сердце на эти вопросы: кто мы и откуда, ради чего живем, и во имя чего готовы умереть, что станет с нашим миром, если в нем окончательно утвердятся отчуждение и недоверие, раздор и вражда?

Должны ли религии противопоставляться друг другу под благовидным предлогом найти Истину или же каждой из них спасительнее сосредоточиться на осознании своей подлинной сути, критически осмысливая свои собственные действия и образ жизни? От этих вопросов уйти невозможно, потому что некуда. Без ответов на религиозные вопросы у человека не будет мира в душе, а без религиозного мира в обществе невозможен мир на планете. Это чрезвычайно актуально не только для современности, но является смыслом всей человеческой истории. Если Бога нет, то нет и всеобщих нравственных норм, а значит не существуют и самих понятий добра и зла. В мире не останется ничего, кроме слепого, безжалостного безразличия, обернутого в беспо-

Все библейское повествование представляет нам историю грандиозной мировой эпопеи, пронизанную одной Божественной целью: соединение Бога и человека, союз между существами неравносильными, но нравственно однородными. И союз этот возникает только благодаря свободной воле Творца. И поэтому «Завет» – это не двухсторонний договор, а дар Божественной любви. Верить – значит принять сей дар и жить с Богом. Богу ничего не нужно, он создал нас, чтобы любить и совершенствовать. Присоединиться к «Завету», переживать его как нечто священное – вот что, по-моему, означает быть человеком религиозным, человеком верующим. «Господин миров, милостивый и милосердный», идет навстречу человеку, падшему и несовершенному, навстречу человечеству – многоликому и многообразному. Этим объясняется множество разных религиозных систем и складывается трагическая история их взаимоотношений. У меня нет возможности говорить об этой истории долго, нет столько мудрости, чтобы выписывать рецепты, нет желания размывать Истину ради компромисса, но есть одно неотъемлемое право – всем сердцем молиться о единении всех людей в любви к единому Богу. Бог дает нам себя, чтобы и мы могли отдавать себя Ему и друг другу. Встреча религий возможна не через отказ от истины, а только через непрестанное углубление в нее. Только так можно постичь сущности религии, ее духовности, которая исходит от Духа Любви. Религия без духовности может переродиться и стать разрушительной силой, разделяя и противопоставляя людей. Духовность, являясь сердцем религии, всегда объединяет и роднит. Любая религия, если не будет отчищена истиной Любви – неизбежно вырождается в опасное суеверие. В божественном призыве любить ближнего своего нет указания на то, что ближний – наш родственник, друг, единоверец. Мы призываемся любить человека таким, какой он есть, каким он предстает пред нами. Мой ближний – тот, кого я встречаю каждый день своей жизни в готовности понять, принять, простить. И даже враг в духовном смысле есть неразгаданный ближний. Ибо последний Суд принадлежит Богу. С этим согласятся, наверное, представители всех конфессий, собранных здесь. Если это так, то к ближнему мы обязаны относиться как к Тайне Божьей. У нас нет прав вперед Бога произносить свой суд. У нас нет никаких оснований думать, что мы обладаем бесконечными знаниями о бесконечности тайн Божьих. Оставим суд Богу и постараемся помочь друг другу стать лучшими христианами, иудеями, мусульманами, индуистами или буддистами. Вместо нескончаемого противостояния давайте будем искренне познавать друг друга. А если мы решаемся на критические суждения, то должны быть готовы к критике и в собственный адрес. Вместо того, чтобы убеждать другого человека в истинности только своей веры, давайте поможем раскрыть ему глубину того, с чем он уже соприкасается в собственной традиции. Если посреди разделения и противоречий мы больше будем вслушиваться в глас Божий, то Истина будет светить всем нам и света будет достаточно для тех, кто хочет видеть.

Религию ни в коем случае нельзя подчинять практическим и политическим целям. Это очень опасный способ очеловечивания религии и превращения Бога в слугу собственных интересов, лишая тем самым достоинства и Бога и себя. Но, несмотря на опасность превращения религии в политический морализм, я убежден, что воспитание в духе мира, справедливости и любви к Творцу и по всему творению – есть основное задание любой религии. В противном случае, если любовь не является всеобщим и главным императивом, то любая религия обессмысливается. Любовь – непреложный закон человеческого бытия, происходящий от Бога, а нравственность заключается в стремлении жить, утвердив этот закон в собственном сердце. Я в это верю и живу, не теряя надежды.

И последнее. Настали времена, когда каждый человек, в состоянии благодати что-то узнающий о той любви, которая есть Бог, приобретает необычайную ценность. И это вопреки всем религиозным и национальным различиям! Все те, кто не довольствуется пошлым потреблением, не утонул в мирских удовольствиях и прихотях, не заперся в бесконечном себялюбии и не увлечен идеей собственной исключительности, – все они составляют живую ткань истории и являются чем-то прекрасным в глазах Божьих. Все те, кто не ищет земного рая, пренебрегаемая Небесным, кто не трясется над своим счастьем, а идет навстречу другому, подражая Богу в Любви, – они и только они есть сыны Божьи. Из них собирается народ Божий. А их вера является содержанием всех богодухновенных религий. Без такой веры и такого народа все исторические формы остаются лишь моделями, символами, неполными и даже условными.

P.S. Я вспомнил интересный разговор с архиепископом Езрасом Нерсисяном – главой Российской и Ново-Нахичеванской епархии Армянской Апостольской Церкви. Он с удивлением говорил о том, что у нас в стране много праздников, но нет одного очень важного – Праздника Веры. Мне кажется, этот праздник мог бы стать радостным и объединяющим.

Նոր հրատարակություններ



Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը լույս է ընծայել երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Քաղկեդոնի ժողովն ու Հայ Եկեղեցին» մենագրության ռուսերեն թարգմանությունը և Ս. Արևշատյանի և Կ. Ա. Միրումյանի պատրաստած «Հայ միջնադարյան փիլիսոփայություն» ձեռնարկը:

Գարեգին Ա Հայրապետի «Քաղկեդոնի ժողովն ու Հայ Եկեղեցին» աստվածաբանական կարևորագույն ուսումնասիրությունը Քաղկեդոնի ժողովի (451 թ.) և հայկական ավանդության հետազոտության առումով պատմա-աստվածաբանական վերլուծության դիտանկյունից անդրանիկ փորձերից է և շահեկան է հատկապես պատմական ու աղբյուրագիտական համակողմանի քննության ու վերլուծության, ինչպես նաև քաղաքական, եկեղեցական ու աստվածաբանական փաստերի համակարգվածության տեսանկյունից:

«Հայ միջնադարյան փիլիսոփայություն» ձեռնարկն ստեղծվել է հեղինակների «Հայոց փիլիսոփայության պատմություն» աշխատության հիման վրա: Այստեղ փաստական հարուստ նյութի գիտատեսական և պատմաաստվածաբանական համակարգային վերլուծության և ընդհանրացման համատեքստում մեթոդաբանական նոր հայեցակարգի լույսի ներքո ներկայացված է հին և վաղ միջնադարյան հայոց փիլիսոփայությունը: Այս ուսումնասիրական ձեռնարկի հրատարակությունը նվիրված է Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադրման 140-ամյակին:

Գրքերը տպագրվել են մեկենասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի:

Исполнилось 75 лет академику РАН Эдуарду Айламазяну



Поздравление юбиляру направил Глава Российской и Ново-Нахичеванской епархии архиепископ Езрас

«Глубокоуважаемый Эдуард Карпович!

Мне доставляет огромную душевную радость поздравить Вас с 75-летним юбилеем!

Хвала и благодарение Богу, даровавшему мне радость близкого дружеского общения с Вами – одним из самых выдающихся представителей мировой науки и одним из самых преданных сынов нашей Апостольской Святой Церкви.

Ваш вклад в дело развития современной медицинской науки огромен. Вы вырастили плеяду блестящих последователей, для которых смысл жизни – в верности клятве Гиппократа. Люди, которым посчастливилось учиться у Вас, работать с Вами, знают Вас как истинного профессионала, призванного осуществлять гуманитарную миссию по сохранению жизни и здоровья, как блестящего педагога, прославившегося своей научно-практической деятельностью. Возглавляемый Вами научно-исследовательский институт имени Отта является одним из самых передовых медицинских центров страны.

Вновь и вновь поздравляя Вас с замечательным юбилеем, молитвенно прошу Господа Христа одарить Вас неиссякаемыми силами и долголетием, хранить Ваш дом в мире, любви и благоденствии во все времена вашей жизни».

Один из крупнейших гинекологов современности, признанный лидер петербургской школы акушеров-гинекологов, доктор медицинских наук, профессор, Действительный член РАМН, директор Института акушерства и гинекологии имени Отта РАМН, главный акушер-гинеколог Северо-Западного Федерального округа Эдуард Карпович Айламазян окончил 2-й Московский государственный медицинский институт им. Н.И. Пирогова (ныне Российский государственный медицинский университет). С 1965 г. его жизнь связана с 1-м Ленинградским медицинским институтом им. академика Павлова (ныне Санкт-Петербургский государственный медицинский университет), где он прошел путь от ординатора клиники до заведующего кафедрой. Большой заслугой академика Айламазяна является создание научно-учебно-производственного объединения кафедры акушерства и гинекологии Санкт-Петербургского государственного университета им. академика Павлова. Под его руководством получили развитие многие направления научных исследований. Им сформулированы основные положения новых научных дисциплин.

По инициативе профессора Айламазяна создан целый ряд практических направлений и специализированных медицинских центров по оказанию помощи тяжелым контингентам больных.

Он является автором более 700 научных и учебно-методических работ, в том числе учебников «Акушерство» (переиздавался 7 раз) и «Гинекология», книг по актуальным вопросам акушерства и гинекологии. Многие его труды переведены на иностранные языки.

В 2002 г. он стал лауреатом премии Правительства РФ за разработку и внедрение мер по охране репродуктивного здоровья женщин при воздействии вредных факторов окружающей, в том числе производственной, среды.

От имени редколлегии и читателей газеты «Аватамк» сердечно поздравляенм Эдуарда Карповича с юбилеем и желаем ему долголетия, здравия и благополучия.

Карен ВАРТАНЯН,
член-корреспондент РАЕН

Հայոց բանակի 23-րդ տարեդարձը

Գոհար Մարտիրոսյան

Սանկտ-Պետերբուրգի հայ համայնքը միացավ Հայոց բանակի 23-րդ տարեդարձի տոնակատարություններին: Քաղաքի սուրբ Կատարինե եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սարգիս քահանա Չոփուրյանը եւ Վսեվոլոժսկի սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Արշակ քահանա Նազարյանը աղոթեցին՝ ի բարօրություն հայոց բանակի եւ օրհնեցին քաղաքի ռազմական բուհերում սովորող հայ սպաներին:

S. Սարգիս քահանա Չոփուրյան. «Չլինի հզոր բանակ, չլինի անկոտրում ոգի, ավիրում, հավատք եւ հայրենասիրություն, չի լինի հայրենիք»:

Հավաքվածները լռությամբ հարգեցին Հայոց Ցեղասպանության զոհերի, ինչպես նաեւ նահատակված բոլոր հայորդիների հիշատակը: Այս արարողությամբ են բացվում 2015թ-ին համայնքի իրականացվող բոլոր միջոցառումները: Քաղաքում ՀՀ Գլխավոր հյուպատոս Հրայր Կարապետյանն ընդգծեց, որ Հայոց բանակը Հայաստանի Հանրապետության գոյության հիմնական գրավականն է:

Հրայր Կարապետյան. «Այսօր էլ մեր բանակում սահմանին կանգնած հերոսներ ունենք: Հերոսներ, որոնք երբեմն իրենց կյանքի գնով են պաշտպանում իրենց հարազատների, իրենց օջախի, իրենց երկրի անդորրը»:

Հայաստանի պաշտպանության նախարարության կադրերի եւ ռազմական կրթության վարչության Սանկտ-Պետերբուրգի ազգային խմբի ղեկավար, գնդապետ Մարկլեն Սականյանը ներկաներին փոխանցեց նախարարության ղեկավարության շնորհավորանքները: Նրա խնդրանքով Գլխավոր հյուպատոս Հ. Կարապետյանը նախարարության պարգեւներ հանձնեց ազգային խմբում լավագույն սովորողներին եւ կարգապահ սպաներին:

Ֆելիքս Պողոսյան, Սանկտ-Պետերբուրգի Միխայլովի անվան հրետանային ակադեմիայի աղյունկտ, գնդապետ. «Մեծ քանակությամբ սպաներ, որոնք ծառայում են ՀՀ զինված ուժերում, հատկապես հրետանավորի մասնագիտությամբ, բժիշկներ, թիկունքայիններ, կապավորներ, ստացել են ուսումը Պետերբուրգի բարձրագույն ռազմական հաստատություններում»:

Միջոցառման ընթացքում հնչեց Պետերբուրգում գտնվող երգահան Սոֆյա Միքայելյանի “Քայլերգ Հայոց բանակին” ստեղծագործությունը: 1996-ին գրված քայլերգը Հայոց բանակ մուտք գործելու իր ժամին սպասել է շուրջ 9 տարի, եւ այսօր արդեն Պաշտպանության նախարարի կարգադրությամբ կատարվում է զորամասերում: Մի օրում՝ փետրվարի 5-ին 1996թ-ի այս ստեղծագործությունը ոգեղեն ուժով եկավ, մասնակցեց մրցույթի, ունեցավ հաղթանակ:

Ռուսաստանի Հյուսիսային մայրաքաղաքի հայ համայնքը Հայոց բանակի տոնը նշում է արդեն 7 տարի անընդմեջ:

Սուրբ Սարգսի բարեխոսությամբ

Գոհար Մարտիրոսյան

Պետերբուրգահայ երիտասարդներն իրենց նվիրական իղձերի կատարումը վստահում են սիրո բարեխոս սուրբ Սարգիս զորավարին: Հունվարի 30-ի երեկոյան քաղաքի սուրբ Կատարինե հայկական եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սարգիս քահանա Չոփուրյանը եւ Վսեվոլոժսկի սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Արշակ քահանա Նազարյանը երիտասարդների օրհնության կարգ կատարեցին:

Տեր Սարգիս քահանա Չոփուրյան. ,Նա մեր երիտասարդների համար նվիրական սուրբ է, որովհետեւ օգնում է իր բարեխոսությամբ, իր աղոթքով, իր նվիրումով, որ մեզ պիտի ոգեւորի: Եւ մենք առավել պիտի ուշադրություն դարձնենք մեր ազգային տոներին, սրբերին, քան օտարներինե:

